

ՀԱՂԱՐԳԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Է. Բ. Սպարյան

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իսկ, գոտի

Դիմում արժանապատիվ պատվերով չէ, այն գտնում ենք զգաժրի «1, հագնել, 2. (փխր.) իր մեջ կրել, համակվել», զգածումն հագնելը», զգած-նում համակվել, զգածվել», զգածուցանել համակվել», մթազգած, խաւարազ-գած «մութով» խաւարով պատված», սկազգած «սեւով պատված», առիզած «ղենջակ, գոգնոց» և այլ բառերում: Ծագում է հնդ. *veg* «հյուսել, հանգուցել, հյուսվածք, գործվածք» արմատից: Յեղակից լեզուների բազմաթիվ բառերից հայերենին իմաստի կողմից առավել մերձավորներն են. լատ. *velum* «1. վա-րագույր, 2. ծածկոց, վերմակ, առագաստ», *veio* «ծածկել, պատել, փաթա-թել մի բանով, փաթաթել—կապել», կիմր. *ɣwɛ* «գործվածք, հյուսվածք», փերմ. *wickeln* «պատել, փաթաթել», *wickei* «գալար, փաթեթ», անգլոսաքս. *wöcig* «1. պատառուկ, պատաղիճ, 2. օղ, օղակ» և այլն: Այս բառերի համեմա-տությունից երևում է. որ հայերեն զած արմատն էլ պետք է նշանակած լինի պատել, փաթաթել, որից ինքնին կարող էին զարգանալ հագնել, վրան առ-նել, ինչպես և փոխաբերական՝ համակվել իմաստները: Արմատի բնիմաստն առավել ցայտուն է մթազգած, խաւարազգած բառերում, որոնց մեջ զգած նշանակում է «պատած»:

Նույն հնդեվրոպական արմատից է ծագում գոտի < գաւտի բառը, որի մեջ ի-ն ածանց է, և արմատն է գաւտ, որ պարզ կերպով երևում է պարեգոտ, ընդգոտել «միասին կապել» բառերում: Ակ. Գր. Ղափանցյանը դեռևս 1927 թվ. իր «Հնէա-բանական մի քանի մնացորդներ հայերենում» աշխատության մեջ շեշտում է աւ—ա լծորդների առկայությունն այնպիսի բառերում, ինչպիսիք են մաւտ (մօտ)—մաւտ (-չիմ), ամաւթ—ամաչ-ել, ծանաւթ—նանա-չ-ել (*ծանաչել), արաւտ-արած-ել¹ և այլն: Նույն աշխատության մեջ նա նկատում է աւ—ա լծորդումին զուգորդող պայթնափականների պարզեցումը. ինչպես աղաչել—աղաւթ, հանա-չել—ծանաւթ, արածել—արաւտ և այլն², որոնց մասին ավելի հանգամա-նորեն խոսում է շատ տարիներ հետո՝ իր «Ընդհանուր լեզվաբանության» մեջ: Մեզ համար, տվյալ դեպքում, կարևոր է այն, որ այս աշխատության

¹ Գր. Ղափանցյան, «Հնէաբանական» մի քանի մնացորդներ հայերենում, Երևան, 1927, էջ 31

² Անդ, էջ 31

լորն էլ կասկածից վեր են համարում՝ փախար րառի իրանական ծագումը: Մենք նույնպես ընդունում ենք այդ, ըստ որում հայերենի փախ-ով սկսվող բոլոր ստուգաբանված րառերը իրանական փոխառություններ են (ճար, ճարակ, ճարտուկ և այլն): Դրանից ելնելով՝ մենք հայերենի փախար րառը կապում ենք նույն արմատի հետ, որից ծագում է փապիկ. այս րառը Հ. Աճառյանը ստուգաբանում է այսպես. ծագում է պհլ. čarpik ձեից, որ թեև ավանդված չէ, բայց հմմտ. պրսկ. čarb-dast «աջողակածևոն և երազաշարժ», carb zaban «ճարտարալեզու», որ և jarb «հաջողակ, ճարտար», jarb-dast «հաջողակածևոն», jarb-zaban «ճարտասան» են: Մենք գտնում ենք, որ ճարտար րառն ստացվել է պհլ. čarō արմատի* čarp-tar ձեից, որը նույնի համեմատական աստիճանն է և պետք է նշանակեր ավելի հաջողակ, ավելի հմուտ, որ թեև պահլավական աղբյուրներով ավանդված չէ, բայց գտնում ենք փիրդուսու Շահնամում چاربتار čarbtar ձևով: Պարսկերեն čarbtar ձևն օրինաչափորեն րատացվել է պահլ. čarptar-ից, որ հայերենում պետք է տար փախար, ինչպես ունենք պահլ. čarluk>հյ. փախուկ ճանճկին, բնավոր սպիտակ: Որ րազատական աստիճանի ձևը կարող էր անցնել հայերենին և դործածվել որպես անկախ ձև, հաստատվում է պահլ. vattar>հայ. վառար⁸ րառի փոխառությամբ: Այստեղ čarptar> փախար ձևի մեջ կասկած կարող է հարուցել պ-ր անկումը, բայց հայտնի է, որ հայերենը րազաձայնների խճողում չի թուլլաորում և սովորաբար կամ իրար հաջորդող րազաձայնների մեջ ավելացնում է ը, կամ էլ նրանցից մեկը կորցնում է. փախար րառի հետ հատկապես համեմատելի են վարդապետ>վարդպետ>վարպետ, և կրտսեր>կրսեր, որոնց մեջ ունենք միջին պալթականի անկում լրդպ, լտս կապակցություններին մեջ:

3. Դրոյլ

Այս րառը, որ նշանակում է «շոնապան» և համապատասխանում է հունարեն Θυραργός րառին, ըստ ՆՂԻ-ի վկայությամբ, մեկ անգամ միայն դործածված է Բարսեղի ճառերի թարգմանության մեջ, հետևյալ ձևով. «Ջարքալութեան զփականս նա ունի. դրոյլ է երկնից...ի ձեռն նորա եղիցին քեզ վալելք րարութեանցն» (ՆՂԻ, 1, 643): Կասկածից վեր է, որ րառը կազմված է դր>դուր արմատից, որ նույնն է դուռն րառի հետ (հմմտ. դուրք, ի դրաճե և այլն): Բառի երկրորդ րազադրիչն է ոյլ, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ հնիս. -l], —tel վերջավորությունը. դրանցից առաջինը, որ օրինաչափորեն տալիս է հայերենն աւղ, ենթակայական դերբայի հանրահայտ վերջավորությունն է, երկրորդ ձևը ալլուստ հայտնի չէ, բայց կա սլավոնական-tel վերջավորությունը, որ հայերենի աւղ-ի զուգահեռն են համարում:

Հայտնի է, որ հնիս. l իսկ պալթականը ձայնավորի ու ձայնորդի միջև դառնում է լ (ինչ. matros>մաւր, aratrom>արաւր), իսկ երու ձայնավորների միջև՝ j (ինչ. mater>մաւր, bhrater>եղրաւր): Իրդ, հայերենի աւղ ձևը կարող էր ստացվել միայն հնիս. ստորին ձայնադարձով-l ձեից, իսկ tel ձևը օ բնի հետ միանգամայն օրինաչափորեն կտար-ոյլ: Նշանակում է, հայերեն

⁷ Նույն տեղում, էջ 622:

⁸ ԴՅ. vattar>հայ. վառար րառի մեջ ունենք ր՝ տարնամանության հետևանքով:

դրոյլ բառը ծագում է հնիւ. *dhur-o-tel գերբայական ձևից: Ուշագրավ է, որ ոչ թե ղոնապան, այլ դրոյլ բառն է գործածվել թարգմանության մեջ հունարեն Խարած-ի դիմաց, որ նույնպես գերբայական կաղմութիւն ունի:

4. Գին ածանցը

Հայերենի շատ գործածական վերջածանցներից է-գին, որ սովորաբար կապել են գին տարժեք» բառի հետ, ենթադրելով, թե հիշյալ ածանցով բառերը նախապես եղել են բարդութիւններ, բայց հետո, գործածվելով իրեն մակրայ, ըմբռնվել են որպես ածանցավոր բառեր, և դրա հետևանքով էլ ստացվել է գին մակրայակերտ ածանցը: Այս բացատրութիւնը այնքան հավանական է, որ բոլորը կարծես թե լուռ կերպով ընդունել են այդ՝ առանց կասկածելու: Եվ սակայն, -գին ածանցով բառերի ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ դա ճիշտ չէ: Նախ՝ այդ ածանցով մակրայներ են կազմվում ժամանակակից հայերենում (կլծագին, տրոմագին, խնդագին և այլն), մինչդեռ դրաբարում նա կաղմում էր ածականներ (ահագին տահագ, ուժգին տուժեղ, բուռն, հզոր, մոլեգին թխստ մոլի, կատաղի), որոնք կարող էին գործածվել նաև մակրայաբար. հմտ. Հոգմ մեծ ուժգին (Ա. Թագ, ր, 6), Ուժգին գոչմամբ... մատուցանէր (Երբա. Ե, 7), բայց՝ ՁԻ ուժգին շարժիցի ի հոգմոյ (Յայտ. 2, 13): Երբ քննութիւն ենք ենթարկում այդ ածանցով կազմված այն բառերը, որոնք գործածվել են հինգերորդ դարի մատենագրութիւն մեջ, տեսնում ենք, որ գին նշանակում է ունեցող, որևէ հատկութիւն օժտված, ինչպես՝ մոլեգին = մոլութիւն օժտված, ուժգին = ուժ ունեցող, ուժեղ, մթագին = մութ ունեցող, մթով օժտված = մթին, և այլն, մինչդեռ գին բառով կաղմված ածականների մեջ գին բաղադրիչը նշանակում է զգին ունեցող, գնող, գնած, գնված, ինչպես՝ մեծագին = մեծ (թանկ) գին ունեցող, քանկագին = թանկ գին ունեցող, արծաթագին = արծաթով (= դրամով) գնված (գնած), մարդագին = մարդ գնող և այլն: Այնուհետև՝ գին բառով կաղմված ածականները մակրայաբար չեն գործածվում: Նկատելի է, որ գին բառով կաղմված ածականները սովորաբար ենթարկվում են ոչ հոլովման, այսինքն՝ գին բառը պահպանում է իր անկախ հոլովումը, մինչդեռ գին ածանցով կաղմված ածականները հոլովվում են ի-ա խառն հոլովմամբ. հմտ. նարեան ազնուի մեծագնոյ (Մար. Ժ. 3)⁹, բայց՝ ճարժմանց ահագնից եղելոց ի Բիւզանդիոն (Խոր., Դ., 52): Այս ամենայն են մոլեգնին արուեստքն (Ճառընտ., Դ) և այլն: Ուշագրավ է, որ մոլեգին բառը հոգնակիում ունի նաև եաց ձևը, ինչպես՝ նմանեալ ևս մոլեգնեաց (Ճառընտ. Ա.). դա ցույց է տալիս, որ -գին ածանցն ունեցել է ի բնով հիմք իգական սեռի համար¹⁰, իոկ այդ էլ նշանակում է, թե այդ ածանցը դեռ շատ վաղ ժամանակներում արդեն ածանց է եղել և, հետևաբար, կապ չունի դին բառի հետ: Նրա հնութիւնն օգտին է խոսում նաև այն՝ որ շատ բառերի մեջ նա պարզապես սաստկութիւն է ցույց տալիս (մոլեգին = խիստ մոլի, կատաղի, մթագին = խիստ մութ և այլն). ինչպես և այն. որ ունենք նրա կրկնակի գործածութիւնը՝ մեկ բառի վրա,

⁹ Կա նաև մեծագնի, բայց դա մեծագին բառի սեռականը չէ, այլ ի ածանցով կաղմված բարդածանցավոր բառ. հմտ. վաճառեալ զգա մեծագնի (Մատ. ԻԶ, 9):

¹⁰ Սեռի՝ հին հայերենում պահպանված հետքերի մասին տե՛ս Ն. Ա. Ե. և յ ա ն, Լիակատար քերականութիւն հայոց լեզվի, Կ. Յ. ԷՊ 292 - 312:

ինչպես՝ ահագնագին: Վերջապես, առանձնապես կարևոր է այն, որ զին բառով կազմված ածականներից բայ չի կազմվում, չի կարելի ասել՝ զանձագնել, մեծագնել, քանկագնել և այլն. անհրաժեշտության դեպքում դիմում են հարադրությունները՝ օգնությունը (որ. գանձագին առնել), մինչդեռ զին ածանցով կազմված ածականներից ունենք բազմաթիվ բայեր (մոլեգնել, ահագնել կամ ահագնանալ, մթագնել և այլն): Այս բոլորը ցույց են տալիս, որ զին ածանցը ոչ մի էլապ չունի զին բառի հետ: Իրանից ելնելով էլ մենք այն ժազած ենք համարում հնի. vent ածանցից, որ ունի Վ-վետ, մի բան ունեցող, մի բանով առատ» իմաստ, և պահպանված է հնդիրանական, հունական ու լատինական ճյուղերում, ինչպես՝ սանս. aravanտ շրավետ», հն. oinoris «գինեկետ» և այլն: Մասնիկը բաղադրյալ է, որ կազմված է ven և to-ածանցների միացումով¹¹: Վերի օրինակները ոչ մի կասկած չեն թողնում իմաստի համապատասխանության վերաբերյալ. ինչ վերաբերում է ձևին, ապա դա էլ ճշգրիտ կերպով ներկայացնում է հայերենի հնչյունական օրենքները. այսպես՝ հնի. v հայերենում դառնում է գ, հնի. e-ն ուղղվածներից առաջ դառնում է ի (հմմտ. հնի. gen>հայ. ծին), հնի. n մնում է անփոփոխ, իսկ t վերջավանդում ուղղվածների հաջորդ ձայնավորի միջև ընկնում է (հմմտ. * bheronti> բերեն):

Հնդեվրոպական -vent մասնիկի հետ են կապել հայերենի -վետ ածանցը, որ, սակայն իրավացիորեն մերժում է Հ. Աճառյանը¹². մեր այս ստուգաբանությունը մի ավելորդ անդամ ես ապացուցում է այդ մերժման ճշտությունը:

6. Աղաւտ (աղօտ)

Այս բառը հայերենի կենսոնակ բառերից է, որ տալիս է նաև շատ բարդություններ և ածանցումներ, ինչպես՝ աղօտանալ, աղօտաշահ, աղօտերակ, աղօտաճաճանչ, աղօտագոյն, աղօտատեսիլ և այլն, և այլն: Բառիս իմաստն է «կես մութ (լոյս), նսեմ, թույլ, տկար, ոչ պարզ, ոչ մաքուր»: Հայագետներից շատերը ճիշտ կերպով համարել են ածանցավոր՝ բաղադրված -աւտ (օտ)-ուտ մասնիկով, որ հաստատում և ընդունում է Հ. Աճառյանը¹³: Այսպիսով՝ բառիս արմատն է աղ—, որ ծագում է հնի. sal «կեղտոտ—մոխրագույն, մութ մոխրագույն» արմատից. ցեղակից լեզուներում ունենք հրգ. salo «պղտոր, մութ, մոխրագույն», անգլոսաքս. salu «կեղտոտ գույնով», ռուս. соло-вый «բաց դեղին», հին բրետ. haloc «մուգ, մթագույն», կիմր. halog «կեղտոտ» և այլն: Հնդեվրոպական արմատը կապված է sal,—salu «աղ» բառի հետ և փոխաբերաբար գործածվել է նաև ուռնու (որպես աղագոյն տերևների ունեցող), ինչպես և թուքի համար, որ ցույց են տալիս լատ. saliva «թուք», salix «ուռնի», հրգ. sal (a) ha մրգ. salha, անգլոսաքս. sealh. հիսլ. selia, բոլորն էլ ուռնի նշանակությամբ: Ըստ այսմ՝ հայերեն աղաւտ նախապես նշանակել է պղտոր, մուգ, ոչ սպուկ, որից և բխում են բոլոր մյուս իմաստներն ու գործածությունները:

¹¹ K. Brugmann und B. Delbrück, Grundriss, II B., I T., SS. 461—5, 664.

¹² Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, հ. 3, էջ 116:

¹³ Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. 1, էջ 167—168:

7. Ատածիակ

Այս բառն «Արմատական բառարանում» ենթադրաբար իրանական փոխառություն է համարվել՝ կապվելով պահլ. *vistaxv*, Ավեստ, *vistaka* (>հայ. վստա՜) բառերի հետ, որոնք կազմված են *stak* «գեմ հանգնել» արմատից: Այս ենթադրությանը հիմք են ծառայել -ակ վերջահար կապակցությունը, որ իրանական փոխառություններին է հատուկ, բառի ըստաի՞տի ավանդական ընթերցանությունը, և բարբեր նշանակություններից նախնականն ու հիսնականը «ըմբոստ, հանդուգն» իմաստը համարելը: Հայկազյան բառարանում բերված են «անսաստ, ստամբակ, անկարգ, անխրատ, անառակ, խռովարար, խեռ, ըմբոստ, հանդուգն, խիստ» նշանակությունները: Օրինակների մեծագույն մասին ավելի հարմար է «անկարգ, մոլար, անխրատ» իմաստը, ինչպես՝ «Խրատեցէք զստահակս» (ա թեւ, է. 14), «Ստահակք են, որք արտաքոյ կամաց աստուծոյ և առաջնորդաց գործս գործեն» (Ոսկ., ա թեւ.), «Անուսմունքս և անխրատքս և ստահակք» Փիլ., ել., ր, 34) և այլն: Բնուի նախնական իմաստը պետք է համարել «մոլար, մոլի, ստամետ», ըստ այսմ, կհանվի արմատական բառերի շարքից և կդասվի բարդությունների շարքում, կազմված սուտ-հաի արմատներից, որ նախապես պետք է նշանակեր ստության հակված, ստության հակում ունեցող, մոլար: Համապատասխանաբար ավանդական ընթերցանությունը պետք է փոխարինել սլտածիակ ընթերցանությամբ: